ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 14

14.08.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4 գնման պայմանագրի

ք. Երևան 18.03.2022թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կապալառու)՝ ի դեմս ընկերության տնօրեն Հ. Մնացականյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի N 200-Ն որոշումը և ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների իրականացման համար Կողմերի միջև 14.08.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 5.1.1 և 8.4 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ հաստատել 2022 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը և օրացուցային գրաֆիկը՝ համաձայն Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածների:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածներ N 1-ը և N 2-ը բաղկացած են 1 (մեկ) էջից և համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,	ք. Գավառ, Անդրանիկի 5
կառավարական տուն 3	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 1150014871111107
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 08404037
Հ/Հ 900011012599	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար	Տնօրեն՝
(ստորագրություն) Ա. Մկրտչյան	(ստորագրություն) Հ. Մնացականյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՍՈՒՉՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ • 02565827 •

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՑ ԱԿՑԻՈՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ «ՇԻՆՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ №1» ՎԱՐՉԱԿԱՆ ՏՆՕՐԵՆ 08404037 2

Հավելված N 1
14.08.2017թ. կնքված
N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4 գնման պայմանագրի
«18» 03 2022թ. կնքված N 14 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի																	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Մինչև 2021թ. վճարված գումարը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում													
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
1	45611100/3	ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքներ	1 126 652 000	-	-	-	69 180 400	69 180 400	69 180 400	180 083 700	180 083 700	180 083 700	180 083 700	180 083 700	180 083 700	180 083 700	

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 90001101012999
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քաղաքաշինարար

Ա. Մկրտչյան

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ
ք. Գավառ, Անդրանիկի 5
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150014871111107
ՀՎՀՀ 08404037

Տնօրեն՝

(ստորագրություն)

Հ. Բաղդասարյան

Կ.Տ.

Հավելված N 2
14.08.2017թ. կնքված
N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4 գնման պայմանագրի
«18» 03 2022թ. կնքված N 14 համաձայնագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի մարզադահլիճի վերակառուցման 2022թ վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցով նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ.

Կատարման ենթակա աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ

N	Գումար /ՀՀ դրամ/	Կատարվելիք աշխատանքների ներկայացման վերջնաժամկետը*
1	69 180 400	30.06.2022 թ.
2	180 083 700	31.08.2022 թ.
Ընդամենը	**180 083 700**	**31.08.2022թ.**

***Աշխատանքների կատարման սկիզբ է համարվում շինարարական աշխատանքների կատարման, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համաձայնագրերից վերջինի կնքման օրվան հաջորդող օրը:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012599
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

---------- Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ
ք. Գավառ, Անդրանիկի 5
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150014871111107
ՀՎՀՀ 08404037

Տնօրեն՝

---------- Հ. Ղազարյան
(ստորագրություն)

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան «16» մարտ 2022թ.

«Թիվ 1 Շինվարչություն» ԲԲԸ ի դեմս Ընկերության տնօրեն Հրայր Մնացականյան /նույնականացման քարտ 000853622/, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/4 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.5 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.6 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.7 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ԹԻՎ 1 ՇԻՆՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» ԲԲԸ

ք. Գավառ Անդրանիկի 5

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1150014871111107

ՀՎՀՀ 08404037

Տնօրեն Հ. Մնացականյան

M.S

16/03/2022թ.

1.	ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*
2. Թիվ	
3.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20 ___թ.
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն `«ԹԻՎ 1 ՇԻՆՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» ԲԲԸ	
5. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ	
6. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ1150014871111107	
7. Վճարողի ՀՎՀՀ՝ 08404037	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02565827	
12.Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900005000758	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ 6773570 (վեց միլիոն յոթ հարյուր յոթանասուներեք հազար հինգ հարյուր յոթանասուն)	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ,AMD	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝	
19. Վճարման պայմանները՝	<ակցեպտավորված վճարում>
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները /_____/ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.S. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.S. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

** Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*